# ՀՖՖ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 2019-2025

ՀՖՖ XVIII ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԵՐԵՎԱՆ, 26.06.2019

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Մեթոդաբանություն
- Միջավայրի վերլուծություն/մարտահրավերներ/SWOT
- Տեսլական, առաքելություն և արժեքներ
- ՀՖՖ ռազմավարական ուղղություններ
- Ներազդող գործընթացներ

# ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1
Իրավիճակի վերլուծություն/ մարտահրավերներ
Ինչպե՞ս է ՀՖՖ ներկայիս իրավիճակը

2
Տեսլական և առաքելություն
Որո՞նք են ՀՖՖ հիմնական ռազմավարական ուղղություններն ու նպատակները

3
Գործողությունների ծրագիր
Որո՞նք են նպատակների իրականացման մեթոդները

4
Ֆինանսներ և բյուջե
Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ ռազմավարության իրականացման համար

5
Վերահսկում և բարելավում

# SWOT

- Միջավայրի մանրամասն վերլուծություն
- Մարտահրավերների բացահայտում

| | Դրական | Բացասական |
|---|---|---|
| Ներքին | S<br>✓ Ֆուտբոլը համար մեկ մարզաձև Հայաստանում<br>✓ Անկախություն պետական մարմիններից<br>✓ Աշխատակազմ (բազմաֆունկցիոնալ)<br>✓ ՀՖՖ Նախագահի ազդեցիկ դիրք Հայաստանում<br>✓ Ֆուտբոլը զարգացնելու բարձր ներգրավվածություն<br>✓ ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի ներգրավվածություն | W<br>✓ Ոչ բավարար ֆինանսներ<br>✓ Բարդ կանխատեսելի բյուջետավորման գործընթաց<br>✓ Բրենդի գիտակցության բացակայություն<br>✓ Մարքեթինգային քաղաքականության բացակայություն<br>✓ Գրանցված ֆուտբոլիստների քիչ քանակ<br>✓ Ներքին կառավարման համակարգի բացակայություն |
| Արտաքին | O<br>✓ Հայկական սփյուռք<br>✓ Ազգային հավաքականի ելույթներ<br>✓ ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի առաջընթաց<br>✓ Միջազգային ֆուտբոլի զարգացում<br>✓ Երկրի սոցիալ-տնտեսական զարգացում | T<br>✓ Ֆուտբոլային ենթակառուցվածքի ոչ բավարար քանակ<br>✓ Ցածր և անկայուն տնտեսական իրավիճակ<br>✓ Ներդրողների և հովանավորների քիչ քանակ<br>✓ Ոչ արդյունավետ իրավական դաշտ<br>✓ Տարածաշրջանային հակամարտության առկայություն<br>✓ Ազգային հավաքականների անհաջող ելույթներ<br>✓ Հասարակության բարձր կախվածություն արդյունքներից<br>✓ Ոչ բավարար ֆուտբոլային կրթություն |

# ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը դարձնել առավել ճանաչելի ֆուտբոլի միջոցով

Ապահովել Հայաստանում ֆուտբոլի կայունությունն ու շարունակական զարգացումը

# ԱՐԺԵՔՆԵՐ

- Հարգանք
- Թափանցիկություն
- Հաղթողի մտածելակերպ
- Նվիրվածություն
- Արդար խաղ
- Պրոֆեսիոնալիզմ

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ազգային հավաքականներ
- Մանկապատանեկան ֆուտբոլ
- Մասսայական և սիրողական ֆուտբոլ
- Ենթակառուցվածքներ
- Պրոֆեսիոնալ ֆուտբոլ
- Կանանց ֆուտբոլ

# ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐ

## ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Մինչև 2025 թվականը Ազգային հավաքականի որակավորումը Աշխարհի կամ Եվրոպայի առաջնությունների եզրափակիչ փուլերին
- Մինչև 2025 թվականը Մ 17, Մ 19 և Մ 21 տարեկանների ազգային հավաքականների որակավորումը ՈՒԵՖԱ-ի համապատասխան տարիքային խմբերի առաջնությունների եզրափակիչ փուլերին՝ օժանդակելով այդ հավաքականներում Ազգային հավաքականի համար ֆուտբոլիստների պատրաստմանը
- Ֆուտզալի ազգային հավաքականի պարբերաբար մասնակցությունը ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի մրցաշարերին, ինչպես նաև որակավորումը այդ մրցաշարերի եզրափակիչ փուլերին
- Կանանց ազգային հավաքականի, ինչպես նաև Մ 17 և Մ 19 տարեկանների հավաքականների պարբերաբար մասնակցությունը ՈՒԵՖԱ-ի և ՖԻՖԱ-ի մրցաշարերին և որակավորումը այդ մրցաշարերի եզրափակիչ փուլերին

## ՔԱՅԼԵՐ

- ✓ Ֆուտբոլիստի զարգացման ծրագրի մշակում
- ✓ Սեփական խաղաոճի և ազգային փիլիսոփայության մշակում
- ✓ Ֆուտբոլիստների հոգեբանական, սննդակարգային և ֆիզիոլոգիական զարգացման ծրագրերի մշակում
- ✓ Զարգացած սկաուտային համակարգի ներդնում
- ✓ Մարզումային հավաքների և անհրաժեշտ քանակի ընկերական խաղերի պատշաճ կազմակերպում
- ✓ Տեղեկատվության տարածման և փոխանակման պլատֆորմի, հավաքագրված տվյալների վերլուծության համակարգի և տեղեկատվական բազայի ներդնում

# ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՖՈՒՏԲՈԼ

## ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Բարձրագույն խմբի բոլոր ակումբների մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրերի և համապատասխան մանկապատանեկան դպրոցների/թիմերի բարձրացում **«ակադեմիական»** մակարդակի, այդ թվում՝ պահանջվող մանկապատանեկան թիմերի նվազագույն քանակը 7-ից դարձնելով 10
- Կազմակերպված մանկապատանեկան ֆուտբոլում ներգրավված 6-18 տարեկան խաղացողների քանակի ավելացում 5,000-ից մինչև 10,000 խաղացող:
- Մարզերում ֆուտբոլի ակադեմիաների/դպրոցների հիմնադրման և կառուցման ծրագրի շարունակականություն՝ դրանց թիվը հասցնելով նվազագույնը 10-ի
- Մարզերում գործող ֆուտբոլի դպրոցների և մանկապատանեկան ակումբների/թիմերի մարզիչների որակավորման բարձրացում և որակավորված մարզիչների քանակի ավելացում՝ վերջիններիս թիվը հասցնելով նվազագույնը 150-ի

## ՔԱՅԼԵՐ

- ✓ Մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրի մշակում և տեղայնացում
- ✓ «Տաղանդի զարգացման» արդյունավետ համակարգի մշակում և տեղայնացում
- ✓ Դպրոցական կրթության և ֆուտբոլային մարզումների ինտեգրացիա
- ✓ Մրցաշարային և կանոնակարգային բարեփոխումներ

# ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԵՎ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼ

## ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Մինչև 2023 թվականը հիմնել ՀՖՖ պրոֆեսիոնալ առաջնություններին ստորադաս կազմակերպված սիրողական ֆուտբոլի երկու առաջնություն՝ մասնակցության որոշակի չափանիշներով
- Ավելացնել մասսայական և սիրողական ֆուտբոլում ներգրավված հանրության թվաքանակը՝ հասցնելով այն մինչև 80,000
- Մինչև 2025 թվականը ՀՀ մարզերում տեղադրել արհեստական խոտածածկով 300 հատ փոքր դաշտ մասսայական և սիրողական ֆուտբոլի համար

## ՔԱՅԼԵՐ

- ✓ Մասսայական և սիրողական ֆուտբոլի զարգացման ծրագրի և ռազմավարության մշակում
- ✓ Հանրության առավել մեծ զանգվածների և մասնավորապես երեխաների համար ֆուտբոլով զբաղվելու և ֆուտբոլ խաղալու հնարավորություն ընձեռելու նպատակով արհեստական խոտածածկով փոքր խաղադաշտերի տեղադրում մարզերում
- ✓ Սիրողական ֆուտբոլի կազմակերպված առաջնությունների անցկացման նպատակով անհրաժեշտ պատասխանատուների նշանակում և կանոնակարգային դրույթների մշակում
- ✓ Մասսայական ֆուտբոլի շրջանակներում անցկացվող միջոցառումների ձևաչափի փոփոխություն և դրանց քանակի ավելացում
- ✓ «Ֆուտբոլը հանրակրթական դպրոցներում» ծրագրի հետագա իրականացում վերահսկման և գնահատման առավել հստակ համակարգի միջոցով

# ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

## ՆՊԱՏԱԿՆԵՐ

- ❖ Մինչև 2025 թվականը կառուցել և շահագործման հանձնել ՈՒԵՖԱ-ի 4-րդ կարգի մարզադաշտերի չափանիշներին համապատասխան և նվազագույնը 32,000 տարողունակությամբ Ազգային նոր մարզադաշտ
- ❖ Մինչև 2023 թվականը կառուցել և շահագործման հանձնել ֆուտբոլային ժամանակակից միտումներին և չափանիշներին համապատասխանող նոր Տեխնիկական կենտրոն
- ❖ Մինչև 2025 թվականը բարելավել ՀՀ Բարձրագույն խմբի խաղերն սպասարկող մարզադաշտերի պայմանները՝ ապահովելով դրանցում ՈՒԵՖԱ-ի առնվազն 2-րդ կարգի մարզադաշտերի չափանիշների առկայությունը
- ❖ Մինչև 2025 թվականը ավելացնել միջազգային հանդիպումների անցկացման համար նախատեսված և ՈՒԵՖԱ-ի կողմից հավատարմագրված մարզադաշտերի քանակը՝ 4-ից դարձնելով 8

## ՔԱՅԼԵՐ

- ✓ Համապատասխան լոբբինգի իրականացում Կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների շրջանում համագործակցության և աջակցության ծրագրերի մշակման նպատակով
- ✓ Ֆինանսական աղբյուրների ընդլայնում՝ մասնավորապես ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի համապատասխան ծրագրերի շրջանակներում
- ✓ Նպատակային ներդրումների և հովանավորչական ծրագրերի ներգրավում
- ✓ Մարզերում ֆուտբոլի զարգացման հիմնադրամի ստեղծում
- ✓ Կառուցվող ենթակառուցվածքների հետագա պատշաճ շահագործման և արդյունավետ կիրառելիության ծրագրի մշակում

# ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼ

## ՆՊԱՏԱԿՆԵՐ

- ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության մասնակից ակումբների թիվը 10-ից հասցնել 12
- Առաջին խմբի առաջնությունը դարձնել Բարձրագույն խմբից անկախ առաջնություն՝ մասնակից ակումբների թիվը հասցնելով 10
- Ստեղծել նոր Երիտասարդական առաջնություն Բարձրագույն և Առաջին խմբերի ակումբների դուստր թիմերի համար

## ՔԱՅԼԵՐ

- ✓ ՀՖՖ հովանու ներքո կազմակերպված սիրողական առաջնությունների անցկացում
- ✓ Ակումբների արտոնագրման համակարգի կանոնակարգային դրույթների խստացում և արտոնագրման համակարգի ներդնում Առաջին խմբի մասնակից ակումբների համար
- ✓ Օտարերկրյա ներդրողների ներգրավում հայկական ակումբային ֆուտբոլ
- ✓ ՀՀ մարզերում Ֆուտբոլի ակադեմիաների/դպրոցների հիմնադրում
- ✓ ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների բրենդավորում և կենտրոնացված հեռարձակում

Ակումբների կողմից պրոֆեսիոնալ լիգայի ստեղծման պարագայում, ռազմավարական նպատակները ենթակա են վերանայման

# ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼ

## ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Մինչև 2025 թվականը եռապատկել մասնակցությունը՝ ֆուտբոլ խաղացող կանանց և աղջիկների թիվը հասցնելով 2000
- Փոխել կանանց ֆուտբոլի նկատմամբ ընկալումը Հայաստանում՝ որպես ներառական, ոգեշնչող և ընդունելի երկու սեռերի համար
- Ստեղծել կանոնավոր խաղալու հնարավորություններ պրոֆեսիոնալ, սիրողական և մանկապատանեկան մակարդակներում

## ՔԱՅԼԵՐ

- ✓ Կանանց ֆուտբոլի զարգացման ռազմավարության մշակում և իրականացում
- ✓ Ստեղծել կանանց ֆուտբոլի պրոֆեսիոնալ առաջնություն
- ✓ Ապահովել կազմակերպված մանկապատանեկան առաջնությունների և սիրողական մրցաշարերի անցկացումը
- ✓ Կիրառել ակումբների արտոնագրման համակարգը՝ որպես զարգացման և չափանիշների հետագա բարելավման գործիք
- ✓ Ներդնել կրթական, զարգացման և առաջնորդության ծրագրեր՝ համագործակցելով համապատասխան միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ

# ՆԵՐԱԶԴՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

## 1 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

- ՀՖՖ Մարզչական կրթության համակարգի շարունակական բարելավում՝ ՈՒԵՖԱ-ի Մարզչական կոնվենցիայի ամբողջական կիրառման միջոցով
- Մրցավարական սեկտորի և մրցավարական կրթական համակարգի շարունակական բարելավում ՈՒԵՖԱ-ի Մրցավարական կոնվենցիայի ամբողջական կիրառման միջոցով
- Ֆուտբոլային բժշկության շարունակական բարելավում՝ ՀՀ Առողջապահության նախարարության հետ համատեղ կրթական համակարգի ներդրման միջոցով

## 2 ՖՈՒՏԲՈԼԻ ԷԿՈՆՈՄԻԿԱ

- ՀՖՖ բյուջեի և ընդհանրապես ֆուտբոլ խաղում ներդրումների և շրջանառության աճի ապահովում 50%-ով
- Կոմերցիոն և մարքեթինգային ռազմավարության, ինչպես նաև գործընկերների և հովանավորների ներգրավման համակարգված փաթեթների մշակում
- Տոմսերի առցանց վաճառքի և մերչենդայզինգային ցանցի ստեղծում
- Իրավական և հարկային դաշտի՝ մասնավորապես սպորտին վերաբերող ազգային օրենսդրության համապատասխանեցում և սպորտը խթանող օրենսդրական դաշտի ստեղծում

# ՆԵՐԱԶԴՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

## 3 ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Հասարակայնության հետ հարաբերությունների համակարգված ռազմավարության և ԶԼՄ-ների հետ կապերի զարգացման ծրագրի մշակում
- Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և ներառական ռազմավարության մշակում
- Սփյուռքի հետ հարաբերությունների հաստատման և զարգացման ծրագրի մշակում վերջինիս ներգրավվածության աճի ապահովման նպատակով

## 4 ՖՈՒՏԲՈԼԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

- ՀՖՖ կառավարման գործընթացների բարելավում կառավարման որակի միջազգային ստանդարտների ներդրման միջոցով
- ՀՖՖ ֆուտբոլի կառավարման համակարգի (ֆուտբոլիստների և անձնակազմի գրանցման համակարգ) բարելավում՝ դարձնելով այն հասանելի և կիրառական մեր հիմնական շահառուների համար
- ՀՖՖ վարչական կառուցվածքի օպտիմալացում և համապատասխանեցում ռազմավարական ուղղություններին
- ՀՖՖ աշխատակազմի պրոֆեսիոնալիզմի և որակավորման պատշաճ մակարդակի ապահովում ռազմավարական նպատակները կյանքի կոչելու համար